ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

DOI: 10.54503/978-9939-970-23-3-240

Մովսեսյան Ռենա
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
հայագիտության ամբիոնի դոցենտ
rena-mov@mail.ru
ORCID:0009-0007-1359-8362

Բանալի բառեր. ռազմական ոլորտ, բառաշերտային տեղաշարժ, Ղարաբաղի բարբառ, բարբառային միջավայր, պատերազմյան և հետպատերազմյան իրականություն, բառերի իմաստային տեղաշարժ, դարձված, կայուն կապակցություններ, մականուն, տեղանուն:

Նախաբան

Սույն ուսումնասիրությունը նվիրված է ռազմական ոլորտի բառերի բառաշերտային տեղաշարժերին՝ ավելի քան 30 տարի ռազմաքաղաքական հակամարտության գոտի դարձած և վերջին տասնամյակներում 4 պատերազմ ապրած Արցախի հայերի լեզվամտածողության մեջ:

Աշխատանքի նպատակն է քննել և ներկայացնել Ղարաբաղի բարբառի պատերազմական և հետպատերազմյան իրականությունն արտացոլող այն լեզվական իրողությունը, որի հետևանքով ռազմական ոլորտի սահմանափակ գործածության բառապաշարին պատկանող որոշ բառեր և կայուն կապակցություններ անցել են գործուն

բառապաշար, ինչպես նաև բացահայտել այն գործոնները, որոնց ազդեցությամբ այդ լեզվական միավորները ենթարկվել են իմաստային նոր զարգացումների:

Հետազոտության առարկան պատերազմական և հետպատերազմյան իրականությունն արտացոլող լեզվական միավորներն են՝ բառերը, կայուն կապակցությունները, դրանց իմաստային և ոճական կիրառությունները, որոնցում դրսևորվում են ռազմական ոլորտի բառապաշարի գործածական ակտիվության և իմաստային ծավալի փոփոխություններ:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վերլուծության, համեմատության և հարցման մեթոդները: Հատկապես կարևոր է վերջինը, քանի որ զգալի մաս է կազմում բանավոր խոսքից հավաքված և դեռևս համակողմանիորեն չուսումնասիրված փաստական նյութը:

Բառապաշարը՝ որպես լեզվի առավել շարժուն համակարգերից մեկը, անմիջականորեն արձագանքում է հասարակական կյանքի փոփոխություններին: Ազգի կամ ժողովրդի կենսափորձը և պատմական իրողությունները դրսևորվում են նաև նրա լեզվամտածողության և, մասնավորապես, բառապաշարի մեջ: Ինչպես նշում է Է. Աղայանը. «Բառերը, լինելով բառապաշարի հիմնական միավորները, ապահովում են նրա պարբերական զարգացումը, քանի որ անմիջականորեն կապված են հասարակական կյանքում կատարվող փոփոխությունների հետ[1]»:

Բառը դառնում է աշխարհի ճանաչողության բանալի և պատմության շրջադարձները բացելու անցագիր:

«Տվյալ թեմատիկ խմբում որքան շատ են բառերը, այնքան մեծ է այդ բնագավառի նկատմամբ ժողովրդի ունեցած հետաքրքրությունը:

[1] **Աղայան Է.**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 167:

Բնական է, որ լեզվի զարգացման տարբեր շրջաններում կարող են փոխվել բառապաշարի ոչ միայն իմաստաբանական խմբերը, այլև դրանցում եղած բառերի քանակը: Միևնույն ժամանակ կարող են տարբեր լինել նույն լեզվի տարբերակներում ընդգրկված բառապաշարի թեմատիկ խմբերը: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ աշխարհագրական դիրք, սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական պայմաններ և այլն[2]»:

Բառապաշարը դասակարգվում է տարբեր հիմունքներով: Ըստ գործածականության՝ ընդունված է բառերը բաժանել *համագործածական* և *սահմանափակ գործածության բառեր* տեսակների[3]:

Առաջին շերտի մեջ դասվում են այն բառերը, որոնք հայերենի արդի փուլում արտահայտում են կենսականորեն անհրաժեշտ իմաստներ, գործածվում են լեզվական բոլոր ոճերում և ունեն գործածության մեծ հաճախականություն՝ կազմելով ժամանակակից հայերենի բառապաշարի ակտիվ շերտը:

Սահմանափակ գործածություն ունեցող բառերը գործածվում են յուրահատուկ խոսքային իրադրության մեջ և ունեն գործածության տարբեր բնույթի սահմանափակումներ (գործառական, տարածքային և այլն)[4]: Այս խմբին են դասվում տերմինները (զանազան գիտաճյուղերին, մասնագիտություններին պատկանող բառերը), բարբառային բառերը, ժարգոնային-ծածկալեզվային բառերը, հնաբանությունները և նորաբանությունները, ըստ Ա.Մարգարյանի՝ նաև գրա-

[2] **Քումունց Մ.**, **Ներսիսյան Լ.**, *Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում.* - Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, թիվ 1(40), 2017, էջ 690:

[3] **Առաքելյան Վ.**, **Խաչատրյան Ա.**, **Էլոյան Ս.**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, էջ 226:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 227:

կան-գրքային բառերը[5]:

Մեր ուսումնասիրած օրինակները ցույց են տալիս, որ Ղարաբաղի բարբառի բանավոր խոսքում ևս տեղի են ունենում բառաշերտային տեղաշարժեր. սահմանափակ գործածության որոշ բառեր, մասնավորապես՝ ռազմական ոլորտի բառապաշարի միավորներ անցնում են գործուն բառապաշար և ձեռք բերում գործածության ավելի լայն շրջանակ: Միաժամանակ դրանց մի մասը ենթարկվում է իմաստային զարգացման՝ ստանալով փոխաբերական, դարձվածային և այլ նոր կիրառություններ:

Հայ ժողովրդի պատմության ընթացքում պատերազմական իրողությունները բազմիցս իրենց ազդեցությունն են թողել լեզվի վրա: Մասնավորապես՝ մշտապես հակամարտության գոտի դարձած Արցախի գրեթե յուրաքանչյուր ընտանիքում զինծառայող կար, յուրաքանչյուր ոք այս կամ այն չափով զինվորագրված էր հայրենիքի պաշտպանության գործին, դա է պատճառը, որ հատկապես վերջին 3 տասնամյակում զինվորական և քաղաքացիական կյանքերն ասես ձուլվել էին:

Իրար հաջորդող ռազմական ակտիվ գործողությունները՝ 4 պատերազմները, դրանց հետևանքով ստեղծված կեցության ծանր վիճակները չէին կարող չազդել արցախցու կենցաղավարության, վարքի, մտածողության, հետևաբար և լեզվի վրա:

Արդյունքում ռազմական ոլորտի բառապաշարին պատկանող մի շարք բառեր և կայուն կապակցություններ, անցնելով գործուն բառապաշար, դրսևորել են իմաստային տարբեր զարգացումներ: Այս գործընթացը հատկապես հետաքրքրական է Ղարաբաղի բարբառի դեպքում, քանի որ այն հնարավորություն է տալիս լեզվական նյութի

[5]Տե՛ս **Մարգարյան Ա.**, *Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն*, Ե., 1993, էջ 197:

միջոցով դիտարկելու պատերազմական և հետպատերազմյան իրականության ազդեցությունը բարբառի բառապաշարի վրա:

Ուսումնասիրության նորույթը ռազմական ոլորտի բառապաշարի որոշ միավորների բառաշերտային պատկանելության, գործառական կիրառությունների և իմաստային ծավալի փոփոխությունների համալիր դիտարկումն է՝ հատկապես բանավոր խոսքի նորագույն նյութի հիման վրա:

Ղարաբաղի բարբառի բառապաշարը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրվել և բառարանագրվել է: Ռազմական ոլորտի բազմաթիվ բառեր, դրանցով կազմված կայուն կապակցություններ զետեղված են բանահյուսության գրքերում և բառարաններում: Ղարաբաղի բարբառի բառարանում ոլորտին վերաբերող բազմաթիվ բառեր կան: Դրանք ունեն ծագումնաբանական և իմաստային բազմազանություն: Ինչպես գրական հայերենում, այնպես էլ Ղարաբաղի բարբառում ոլորտի հնաբանությունների մեծ մասը փոխառված է արևելյան լեզուներից:

Օրինակ՝ ղϋմմϋ (թրք. kama) - դաշույն, **ղըրմա** (թրք. gurma)-փամփուշտի արճճե մանր գնդակներ, **լϋլա** (պրսկ. lūla)-հրազենի փող, **թօփ** (թրք.top)-հրանոթ, **չախմախ (**թրք. *c̄*akmak)-ձեռքի հրազենի հարվածող մեխանիզմի մաս, **բարութ** (թրք.barut) – վառոդ, **խանչալ** (արաբ. xanjar, xānčār)-դաշույն՝ երկսայրի սրածայր փոքր թուր, **գϋլլϋ** (պրսկ. gulle) - հրազենի գնդակ, **խըշտիկ** (պրսկ. xišt)-նիզակ, գեղարդ ևն:

Ավելի ուշ շրջանում բարբառը ռազմական ոլորտի բառեր փոխառել է ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ:

«Հայկական ռազմական դպրոցն ընդհանուր առմամբ զարգացրել է Ռուսաստանի կայսերական, ապա՝ խորհրդային դպրոցի կազմում, ուստի և մեծապես ժառանգել է նրա հասկացութատերմինաբա-

նական ապարատը, մինչդեռ արևմտյան դպրոցը հայ զինծառայողների հիմնական զանգվածի համար առայժմ մնում է ոչ բավարար ծանոթ»:[6]

Դրանք հաճախ ժողովրդի մեջ տարածվել են հնչյունական պատկերի փոփոխությամբ: Օրինակ՝ **նագան** (ռուս. наган) – ատրճանակի տեսակ, **ափտամատ** (ռուս. автомат) - ինքնաձիգ, **մինա** (ռուս. мина) - ական, **պըլիմօտ**(ռուս. пулемёт) - գնդացիր, նռնականետ, **փըստօն** (ռուս. пистон) - փամփուշտի հրապատիճ, **կատրէջ** (ռուս. картеч)-արճճե մեծ փամփուշտ, **պատրօն** (ռուս. патрон) – փամփուշտ, **դիվիզյա** (ռուս. дивизия, լատ. divisio) - մի քանի գնդից կազմված զորամիավորում, **կամանդիր** (ռուս. командир) -զորամասի՝ զորային ստորաբաժանման խմբի պետ, հրամանատար ևն:

Ռազմական ոլորտի բառապաշարի՝ փոխառերական իմաստով կիրառելը, դրանց բազմիմաստացումը նոր երևույթ չէ Ղարաբաղի բարբառում:

Ոլորտի բազմաթիվ բառեր այլաբանորեն կիրառվել են հանելուկներում, դարձվածքներում, օրհնանքներում, ամրագրվել Արցախի բանահյուսության գրքերում, բառարաններում: Օրինակ՝ *Տ<u>ըսնէրկու սալդաթ</u> մին <u>խըշտիկ</u> (պրսկ. xišt - նիզակ, գեղարդ) օնին, մին թօփ (ժամացույց սլաքներով)*[7]**:** *Պիւլիւր ա, <u>գիւլլա</u>* (պրսկ.gulle - հրազենի գնդակ) *չի, սիպտակ ա, պէմբակ չի (կարկուտ)*[8]: *Վըէղ լիւլա, մըսէ <u>գիւլլա</u> (բույն և մուկ)*[9]: *Մին <u>թօր</u> (թուր) օնիմ՝ վէչ ըրկաթէ, վէչ պուդվատէ, վէչ էլ դամիրչու ծէրք նի յէկած(ժանիք)*[10]*: <u>Թօրու</u> նման կըտրում*

[6] **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 1940, էջ 125:
[7] **Սարգսյան Ա.**, *Արցախի բանահյուսություն*, Ե., 2015, էջ 601:
[8] Նույն տեղում, էջ 595:
[9] Նույն տեղում, էջ 598:
[10] Նույն տեղում, էջ 587

ա, կըրակու նըման պըծիպածի անում, ամալ ա կամ թուխպան, մըռնում վըղումը (*կայծակ*)[11], *գուլլան ջիգյարատ կըներա, հավայի գոլլոն փայ տըռնաս, թօրը հինչ վեր կարէ վէչ կըտրէ, հացը կըկըտրրէ, թօրը սօր, մին գոլլով երկու ըլըաստրակ վեր քըցիլ, մինչէվ խանչալը (արաբ. xanjar, xānčār-դաշույն) եկավ, լոգուն կըլօխ կըտըրրից, գէնքը (գենք) վեր տինիլ* ևն:

Դրանցում երևում է արցախցու վերաբերմունքը բանակի, զենքի ու պատերազմի նկատմամբ:

Այն մի դեպքում հասնում է պաշտամունքի, օրինակ՝ **թօփու գուլլա** (հրազենի գնդակ) - ասում են լավ, գեղեցիկ երեխայի մասին, **հըներան գոլլա քըցիլ** (մի բանի կարիքը շատ ունենալ ևն) - մի դեպքում ընկալվում է որպես սպառնալիք ու վտանգ. **թօփէն տըմանալ** - սպառնալիքները հանդուրժել, **բարութու վըներ կալ** (վառոդի հոտ գալ)- վտանգ զգացվել ևն, երրորդ դեպքում ասոցացվում է պատվի հետ (**խանչալէն** (**դաշույնի**) **քարը վըեր ըղնել**- պատվազրկվել), ուժի և զորության հետ (***թօրը աչ էլ կըտրէ, ծէխ էլ***-*ուժեղ, ազդեցիկ լինել,* ***թօրէն սօր վախտը*** *- ուժերի, իշխանության ծաղկուն շրջանում), երբեմն՝ ընկալվում որպես կենսական անհրաժեշտություն* (***բարութը կըլխէ***-*սնանկանալ*):

Արցախցու խոստումը երդման է հավասար, եթե ասում է՝ **հաներ թօփ տըրաքէ** (ինչ էլ որ լինի):

Սույն ուսումնասիրության *նպատակը* սահմանելիս առանձնապես կարևորել ենք նշված ոլորտի բառերի իմաստային վերջին շրջանի այն զարգացումները, որոնք չկան բառարաններում և բարբառին վերաբերող գրքերում: Դրանք պատկանում են բանավոր խոսքին. դրանց քննությունն ու արձանագրումը առանձնապես *կարևորվում է*

[11] Նույն տեղում, էջ 574

հիմա, երբ Ղարաբաղի բարբառի կրողները կտրված են բարբառային միջավայրից, համակեցության հնարավորությունից, և հայերենի ամենամեծ բարբառներից մեկը ձուլվելու վտանգի մեջ է:

Արցախյան շարժման զարգացումները հանգեցրին հակամարտության: Պատերազմական իրադրության մեջ ռազմական ոլորտի իրակություններ (ռազմական-վարչական մարմիններ, կազմավորումներ, զինատեսակներ ևն) անվանող բառերն աստիճանաբար ճանաչելի դարձան ու սկսեցին գործառել արցախցիների խոսքում: Հետպատերազմյան ժամանակաշրջանում վերոնշյալ խմբերին պատկանող բառերը հիմնականում վերարտադրվում էին պատերազմական իրավիճակների նկարագրություններում: Սակայն դրանց մի մասը որոշ ժամանակ մնաց համագործածական շերտում, քանի որ հետպատերազմյան իրականության մեջ այդ բառերն արտահայտող երեվույթները, առարկաները կային վերարժևորված ձևերով՝ արտացոլելով հասարակական-սոցիալական իրավիճակ, պատերազմն ապրածների սոցիալական վարք, հոգեկան գործունեություն:

Արցախցիների առօրեական խոսքում հանդիպում է ռազմական ոլորտի բառերի այլաբերական գործածությունը հիմնականում համեմատությունների կազմում: Սա օրինաչափական երևույթ է, քանի որ համեմատությունը ճանաչողության և իմացության հիմնական միջոց է ու նրա հետևանք: Մեր ուսումնասիրած օրինակները կառուցվել են **պըլիմօտ**[12] (пулемёт - գնդացիր), **բայրաքթար** (թրք.՝ Bayraktar - թուրքական արտադրության անօդաչու թռչող սարք (ԱԹՍ)), **բէտէէռ** (ռուս. БТР бронетранспортёр - զրահափոխադրիչ), **գըրադ** (ռուս. град - ռմբակոծող շարժական կայան), **ռեակծիվնի սամալյօտ** (ռուս. реактивный самолет - ռեակտիվ ինքնաթիռ), **տանկ** (ռուս. танк-

[12] Ընդգծված բառերը կան Ղարաբաղի բարբառի բառարանում (տե՛ս **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Արցախի պետական համալսարան, Ե., 2013թ.):

հրասայլ), **սալդաթ** (ռուս. солдат - զինվոր), **փըստօն** (ռուս. пистон - փամփուշտի հրապատիճ) և այլ գոյականներով, որոնք հանդես են գալիս որպես համեմատյալներ և արտացոլում են արցախցու ոչ միայն սրամտությունը, այլև վկայում են համապատասխան զինատեսակների և դրանց հատկանիշների լավ ճանաչման մասին: Խոսքի դրսևորման հաճախականությունն առանձնապես ընդգծվել է *պըլիմօտ*, *գըրադ* զինանուններով: *Պըլիմօտու նըման յիրա տալ, գըրադու նըման յիրա տալ* դարձվածները նշանակում են *վրա բերելով խոսել, հերթ չտալ*.

1. - Հի՞նչ ըս *պըլիմոտի նըման յիրա տամ*:

2. - *Գըրադու նըման յիրա ըս տամ*, սուս ըրա մի պէն էլ մունք խօսինք:

3. -Կամանց խօսէ բէտէէռ չըս դըռդըռցընէլիս:

Շարժման սրընթացությունը արցախցիները զուգորդել են ինքնաթիռի հետ՝ «*Ռէակծիվնի սամալօտու նըման անց կացավ տանը ոըչավը»:*

Արցախյան երկրորդ պատերազմից հետո արցախցիներին ճանաչելի դարձած *բայրաքթար* զինատեսակի անունը կարճ ժամանակամիջոցում տարածվեց և համեմատություններում կիրառելի դարձավ՝ արտացոլելով զինատեսակի թողած տպավորությունը. «*Բայրաքթարու* նըման նէնց քինամա, հըէտան զօռավ ըս հըսնում»:

Իսկանդերը (ռուսական արտադրության կարճ հեռահարության գերճշգրիտ բալիստիկ հրթիռային համակարգ) համեմատվել է չօգտագործվող թանկանոց սպասքի հետ՝ պայմանավորված 44-օրյա պատերազմի ընթացքում տվյալ զինատեսակի չկիրառվելու վերաբերյալ արցախցիների ընկալմամբ. «*Էս վազը հանցա իսկանդէր ինի, տիրալ ըք սիրվանդում, հիանում ըք»:*

Ղարաբաղի բարբառի բառարանում **տանկ** բառի ուղիղ՝ հրաապայլ իմաստից բացի արձանագրված է նաև փոխաբերական իմաստ՝ «հաղթանդամ մարդ»[13] (*Դէ մըէր Քեսպէրն էլ տանկ ա, վըէր քացի ա տամ, մըդակը պուք ա կամ:* Գեր մարդու ծանր քայլվածքը ևս համեմատում են տանկի հետ (*Հէնց շօռ ըս կամ, հէնց ըս լիա տանկ ինիս*):

Ռազմական ոլորտի բառերով կազմված մյուս համեմատություններում նույնպես ընդգծվում են բառերի իմաստային նոր հարաբերությունները: Այսպես՝ **սըլդաթու** (ռուս. солдат - զինվոր) **նման**-ը արցախցու ընկալմամբ *պատրաստականն* է, **պարտիզանի նման**-ը՝ անվախը, իսկ լեզվանին համեմատվում է **փըստօնի** (հրապատիճի) **հետ**: «*Փըստօնի նըման ճրկատադ ա կէնում»:*

Համեմատությունների հիմքի վրա մի շարք բառեր առօրյա խոսակցական լեզվում ձեռք են բերել նոր իմաստներ: Այսպես. **նօրակօչիկը** գործածվում է «որևէ բնագավառում սկսնակ» (*Տու հալամ նօրակօչիկս, 2 տարէ վըէր սըվէրիս, հիշտ ա իննան,* **ձէմբէլը**՝ (զորացրման ենթակա զինվոր (ռուս. демобилизация- զորացրում բառից)) «որևէ բնագավառում փորձառու» (*Դէ տու ձէմբել ըս, ձէվէրը գիդում ըս*), **փըրօնտ/փուրօնտը**՝ (ռուս. фронт - ռազմաճակատ, ռազմադաշտ) «իրադարձությունների կենտրոն» (*Ինքը փըրօնտան ա կամ, տըսնանք հինչ խաբար ա պէրալ,* **շտաբը**՝ (**զինված ուժերի կառավարման մարմին**) «տեղեկացված, նաև՝ լուրեր տարածող» (*Շէնին շտաբը տու ըս: Հի՞նչ խաբար կա*) նշանակություններով: Երբեմն բառը փոխաբերական իմաստով ավելի հաճախ գործածվելով՝ ժամանակի ընթացքում գործածությունից դուրս է մղում ուղիղ իմաստը: Հետաքրքրական է, օրինակ, **բամբավօզ** (ռուս. бомбовоз) բառը (ռուսերենում նշանակում է «ռմբակիր». այն ռազմական ինքնաթիռ է (ռմբա-

[13] Այս իմաստը արձանագրված է վերոնշյալ բառարանում:

կոծիչ), որը նախատեսված է ռումբեր տեղափոխելու և թիրախների վրա նետելու համար), որը բարբառում գործածվում է միայն *շատ գեր, չաղ, հսկայամարմին* իմաստով[14]: Ուղիղ իմաստով բարբառում այլևս չի կիրառվում:

Նոր իմաստային զարգացումներ են արձանագրվում նաև ռազմական ոլորտի այլ բառերում: Այսպես՝ **բարութ** բառը, որի սկզբնական նշանակությունը «վառոդ» է, բարբառում գործածվում է նաև «թունդ, կծու», «լեզվանի» և «դյուրաբորբոք» իմաստներով. *«Տաքդեղը բարութա»*, «*Մին բարութ հարթնըն պէրալ*», «*Մէր Իշխանը բարութ ա, վըէր մին պէն ըս ասում, դաւստի կըտաղում ա*»:

Այսպիսով՝ Ղարաբաղի բարբառում ռազմական ոլորտի բառերի իմաստային զարգացումն ընթանում է տարբեր ուղիներով, մասնավորապես համեմատության, փոխաբերացման և բառիմաստի ընդլայնման միջոցով: Միաժամանակ այդ բառերը դառնում են նոր դարձվածքների և կայուն կապակցությունների հիմք:

Պատերազմական և հետպատերազմական շրջանում բանավոր խոսքում ակտիվացած ռազմական ոլորտի բազմաթիվ բառեր ու արտահայտություններ վերաիմաստավորվելով դարձել են դարձվածքների և կայուն կապակցությունների բաղադրիչներ:

Օրինակ՝ **բօմբ ընգած, քրցած** (ռուս. бомба, ֆր. bombe, հուն. bombos - պայթուցիկ լիցքով արկ, ռումբ) - *թափթփված* (գործա յէկալ ըմ տըէսալ տօնը բօմբ ընգած), **բօյ տալ** (ռուս. бой - կռիվ, ճակատամարտ) - *լեզվակռիվ անել* (Մըէր հրիվանէրը իրգօնէ բօյ ըն տըվալ, էնա իլալ սաւսէրը ընգած, թաղը), **բէզպիլօտնիկու** (беспилотный - անօդաչու) **պիլօտնիկ / շօֆեր**- *անիմաստ, անկարևոր գործով զբաղվող կամ չաշխատող մարդ* (-Հ՞ինչ ըս գործ անում-բէզպիլօտնիկու պիլօտնիկ ըմ), **մինաիսկածէլավ ման կ՚ալ** (миноискатель - ականորս)

[14] Տե՛ս **Սարգսյան Ա.**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013թ, էջ 84:

- բծախնդրորեն փնտրել (մինաիսկածէլավ ման ա կ՝ամ՝ մին փօտ քըթէնա), **պրիսʻագան տալ** (присяга - երդում, երդմնագիր) - կարևոր փորձությունն անցնել (սովորաբար ասում են նորափեսայի մասին), **դիվէրսյա անէլ** (диверсия- քայքայիչ գործունեություն) - քանդել, ավերել (Յէկալ ընք տըէսալ մեր հըրէվանէն խօզէրը մըէր չափարը դիվէրսյա ըրած), **ռազվէտկի կ՝ալ / քինիլ** (разведка – հետախուզություն) -լրտեսություն անել, նորություն իմանալու նպատակով գալ (Տու քինի ռազվէտկի, տըէս հիբ ըն նըշան կ՝ամ), **բամբիտ անէլ** (ռուս. бомбить - օդային հարձակումով ռումբեր նետել՝ ռմբակոծել) - 1. լեզվակռիվ տալ, 2. թափթփել (1. Յըէկալ ըմ տըէսալ խօխէքը տրնէրը բամբիտ ըրած, 2. հարթն ու սկէսուր ուՙրուՙր բամբիտ ըրէցէն), **վայէվատ անէլ**- աշխատել, չարչարվել (Հաՙնդումը մինտըէղ վայէվատ ընք ըրալ), **պէբէէսը միացընէլ** - ցածր խոսել (պէբէէսըտ միացրո՛ւ, խօխան քօն իլած ա), **մին պօլկ մարթ** (**полк** - ինքնուրույն զորամիավորում, գունդ) - շատ մարդ (*մին պօլկ մարթ ա հըվաքվալ հըյաթումը*), **լակատըրնէն սըրէլ** (локатор - տեղորոշիչ) - թաքուն լսել, լրտեսել (Էրհա տըէսնում ա՝ էրկու հօքի խօսում ըն, լակատըրնէն սըրում ա), **տըրէվօգան / տըրիվօղան քըցիլ** (тревога- տագնապ) - իր տագնապն ու անհանգստությունն արտահայտել (Հի՞նչ ըս տըրիվօգան քըցալ, լօխ լ՝ավ ա իննան, վախումէր), **պագօննէտ / զըվաննիտ պիցրացա՞վ** (погон-ուսադիր, звание- կոչում) - ի՞նչ ես շահել դրանից, **պագօննէն թըրչիլ**- պաշտոնի բարձրացումը նշել, **բուշլաթու թև** (ռուս. бушлат, գերմ. busche-run - զինվորական հաստ վերնազգեստ) - անկարևոր մարդ ևն:

Ինչպես նկատվեց, ռազմական բառերի բառաշերտային տեղաշարժը չի սահմանափակվում դրանց՝ համագործածական բառապաշար անցնելով: Գործածության ընդլայնմանը զուգահեռ տեղի է ունենում նաև բառիմաստի փոփոխություն, փոխաբերացում և դարձ-

վածայնացում, որոնց հետևանքով ռազմական ծագում ունեցող բառերը դառնում են առօրյա հաղորդակցության լիարժեք միավորներ։

Ռազմական երկարատև իրադրությունը փոփոխություններ է առաջացրել ոչ միայն Ղարաբաղի բարբառի բառապաշարում, այլև արցախցիների առօրյա կենցաղում։ Պատերազմական ավերածությունների հետևանքով տարբեր զինատեսակների բաղկացուցիչ մասերը, տարաները և այլ առարկաներ հետպատերազմյան շրջանում ստացել են կենցաղային նոր գործառույթներ։ Այդ առարկաների նոր կիրառությունները, բնականաբար, իրենց արտացոլումն են գտել նաև բանավոր խոսքում՝ ձևավորելով նոր բառային և կայուն կապակցություններ։

Օրինակ՝ «Գրադ» համազարկային կայանքի հրթիռների լայն ու խոր արկղերը սկսեցին գործածվել գյուղատնտեսական մթերքների պահպանման համար։ Արցախցիների բանավոր խոսքում կայունացավ ***գրադէն/ին յաշիգ*** կապակցությունը, որը նշանակում էր *գյուղատնտեսական մթերքներ պահելու հարմարավետ արկղ*, օրինակ՝ *Անի՛, քըշաց պադվալը, էն **գրադէ/ին յիշիգան** մի քանէ կարտօշկա պէր։*

Այդ արկղերը գործածում էին նաև որպես դագաղ, ինչը արտացոլվել է «*Քեզ գըրադու յաշիգում ըն թըղըլան*» դարձվածում։ Կապակցությունը նշանակում է «*կարիքի մեջ ես մեռնելու*»։

«Գրադ» համազարկային կայանքի հրթիռների տարաների կափարիչը կենցաղում ծառայում էր որպես մոխրաման։ Այս երևույթը հիմք էր տալիս արցախցիների խոսքում ***գրադէն/ին սամաձէնի պէպէչնիցա*** կապակցության գործառմանը. *Էս գրադէն սամաձէնի պէպէչնիցէքը հինչքան վ՞էր քըցիս, կօտրում չի*։

Ռազմական տեխնիկայի այլ բաղադրիչներ նույնպես հարմարեցվել են կենցաղային նպատակների։ Ինքնաթիռի 500 կգ կասետա-

յին ռումբերի պարկուճների մի մասն արցախցիներն օգտագործում էին որպես տակառներ՝ ցորեն, գարի ամբարելու համար: Հետպատերազմյան շրջանում տարածված էր ***բսմբին պօժկա*** արտահայտությունը. Ցօրէնը յաման լավ ա կէնում *բսմբին պօժկումը:*

Ներկայացված օրինակները վկայում են, որ երկարատև պատերազմական իրականության պայմաններում ռազմական առարկաները դուրս են եկել իրենց սկզբնական գործառութային շրջանակից և ներգրավվել առօրյա կենցաղում: Դրանց վերաիմաստավորված գործածությունը դարձել է նաև լեզվական նոր միավորների ձևավորման հիմք: Այսպիսով՝ ռազմական ոլորտի բառապաշարի տեղաշարժը տվյալ դեպքում պայմանավորված է ոչ միայն բառի անվանած հասկացության հասարակական տարածմամբ, այլև հենց ռազմական առարկայի՝ կենցաղային միջավայրում նոր գործառույթ ձեռք բերելով: Այս երևույթը կարելի է դիտարկել որպես ռազմական իրականության *կենցաղայնացման* լեզվական արտացոլում: Ռազմական առարկան, փոխելով իր գործառույթը, շարունակում է պահպանել իր անվանումը, սակայն այդ անվանումը սկսում է գործածվել նոր առարկայական և հաղորդակցական միջավայրում: Միաժամանակ դրա հիմքով կարող են ձևավորվել նոր կայուն կապակցություններ և դարձվածքներ:

Ռազմական իրողությունների երկարատև ազդեցությունը Ղարաբաղի բարբառի բառապաշարի վրա դրսևորվում է նաև ռազմական ոլորտի բառերի՝ որպես հատուկ անուն գործածվելու մեջ: Ռազմական ոլորտի բառերը ոչ միայն ներթափանցել են առօրյա խոսք և ձեռք բերել փոխաբերական իմաստներ, այլև դարձել են անձանց մականունների և տեղանունների, մասնավորապես՝ մանրատեղանունների բաղադրիչներ: Այս երևույթը վկայում է այն մասին, որ ռազմա-

կան ոլորտը երկար ժամանակ եղել է արցախցիների առօրյա կյանքի և սոցիալական միջավայրի անբաժանելի մասը:

Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսություն» գրքում զետեղված է արցախցիների մականունների ցանկ: Դրանց մեջ քիչ չեն ուսումնասիրվող ոլորտին վերաբերող բառերը: Արցախում ապրում էին մարդիկ՝ հետևյալ մականուններով. **Ալազան, Ասկօլկա (Բեկոր), Ափիցէր, Գէրոյ, Գէնէրալ, Գընդապ, Գընվարդի, Կամանդիր, Լէյտէնանտ, Ղաւմա՛, Նիզակ, Պալկօվնիկ, Պարտիզան, Պիստալէտ, Սալդաթ, Փիդային** ևն: Ռազմական ոլորտի բառերը երբեմն գործածվում են նաև անձնանվան հետ՝ տվյալ անձի մականունը կազմելով կամ նրան բնորոշող անվանում դառնալով. **Գրադէն Ժորան, Տանկիստ Մըխոն, Բեզպիլօտնիկ Նարեկը** ևն:

Ղարաբաղի բարբառակիրների խոսքում հանդիպում են ռազմական հաստատությունների, կառույցների և ստորաբաժանումների անվանումներով ձևավորված մանրատեղանուններ, օրինակ՝ **Շտաբին դիմացը, Գօսպիտալէն թաղը, Գօսպիտալէն կանգառը, Ռէմբատէն թաղը:** Նման անվանումները ձևավորվել են տվյալ վայրի և ռազմական օբյեկտի կամ հաստատության տարածական կապի հիման վրա:

Ռազմական ներկայությունը տարածական անվանման համակարգում դրսևորվել է նաև բնակավայրերի անվանումները ռազմական ստորաբաժանումների համարներով տարբերակելու միջոցով: «**Բէրթաշէնը վերնա՞, տրէճի՞ն, հա, Ճարտարն էլ ֆըտարօյն ա»**:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ղարաբաղի բարբառում ռազմական ոլորտի բառերի բառաշերտային տեղաշարժը բազմաբնույթ գործընթաց է, որն արտահայտվում է ոչ միայն սահմանափակ գործածության բառերի՝

գործուն բառապաշար անցմամբ, այլև դրանց իմաստային զարգացմամբ, փոխաբերացմամբ, դարձվածքների, կայուն կապակցությունների, հատուկ անունների կազմությամբ են: Ուսումնասիրված նյութը վկայում է, որ պատերազմական իրականությունը լեզվում արտացոլվում է ոչ միայն նոր բառերի առաջացմամբ, այլև արդեն գոյություն ունեցող բառերի գործածության շրջանակի, իմաստային ծավալի և գործառական հնարավորությունների ընդլայնմամբ:

Խոսքը պատմական երևույթ է, անմիջապես կապված է իրացման հանգամանքների հետ, իր վրա կրում է պատմական և հասարակական միջավայրի ներգործությունը:

Արցախցիների՝ որպես հակամարտության տարածքում բնակվողների առօրյան բացահայտում է պատերազմյան և հետպատերազմյան իրականություն ապրածների պատմությունը: Բանավոր խոսքի ուսումնասիրությունը բավականին արդյունավետ միջոց է նշվածին հասնելու համար:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., 1940:

Առաքելյան Վ., **Խաչատրյան Ա**., **Էլոյան Ս**., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:

Խաչատրյան Լ., Ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկությունները հայերենում (թեկնածուական ատենախոսություն):

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Ե., 1993:

Չիլինգարյան Դ., **Երզնկյան Ե.**, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, 2015:
Սարգսյան Ա., Արցախի բանահյուսություն, Ե., 2015:
Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան (երկրորդ լրամշակված հրատ.), Ե., 2019:
Քումունց Մ., **Ներսիսյան Լ.**, Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, 2017, թիվ 1(40), էջ 690:

Movsesyan Rena - Lexical Shifts and Semantic Developments in Military Vocabulary in the Karabakh Dialect. - This study examines semantic shifts in military vocabulary within the linguistic consciousness of Armenians from Artsakh, a region that remained a site of military and political conflict for more than three decades and experienced four wars.

The aim of the study is to identify and describe a characteristic linguistic phenomenon reflecting the military and post-war realities of the Karabakh dialect: the semantic shift of individual words and fixed expressions associated with the military domain and their incorporation into the active vocabulary of everyday speech.

Particular attention is given to recent semantic changes affecting lexical units within this thematic group that have not yet been documented in dictionaries or scholarly works devoted to the dialect. These changes are primarily manifested in oral speech. Their study and documentation are especially significant today, as speakers of the Karabakh dialect have been separated from their traditional dialect environment and deprived of the opportunity for communal residence, while one of the largest dialects of the Armenian language is increasingly threatened by assimilation.

The findings indicate that military and post-war realities, together with the difficult living conditions associated with them, have significantly influenced the lifestyle and worldview and, consequently, the linguistic consciousness of the people of Artsakh who experienced these circumstances. As a result, numerous lexical items originally belonging to the military domain have entered the colloquial vocabulary of the Karabakh dialect and acquired new meanings. These words have also contributed to the formation of idiomatic expressions, fixed word combinations, toponyms, and nicknames, and are used as stylistic devices for creating particular forms and nuances of speech.

Keywords: military domain, lexical shift, Karabakh dialect, dialect environment, military and post-war realities, semantic shift, idiomatic expression, fixed word combination, nickname, toponym.

Movsesyan Rena, PhD in Philology, Associate Professor, H. Acharyan Institute of Language, Researcher; Brusov State University, Department of Armenian Studies, Associate Professor.

Мовсесян Рена - Перемещения и семантические изменения военной лексики в карабахском диалекте. - Данное исследование посвящено семантическому сдвигу военной лексики в языковом мышлении армян, проживающих в Арцахе, который более 30 лет являлся зоной военно-политического конфликта и пережил 4 войны.

Цель настоящей работы - выявить и описать одно из характерных явлений, отражающих военную и послевоенную действительность в карабахском диалекте: семантический сдвиг отдельных слов и устойчивых словосочетаний военно-тематической сферы в активный словарный фонд.

Определяя цель исследования, мы особенно выделили последние смысловые изменения слов данной тематической группы, которые

отсутствуют в словарях и книгах, посвящённых диалекту. Эти изменения проявляются в устной речи; их изучение и фиксация особенно важны сейчас, когда носители карабахского диалекта оказались оторваны от диалектной среды и возможности совместного проживания, а один из крупнейших диалектов армянского языка находится под угрозой ассимиляции.

В результате исследования мы пришли к выводу, что военная и послевоенная действительность, а также связанные с ней тяжёлые условия жизни, оказали влияние на образ жизни, мировоззрение и, следовательно, на языковое мышление народа Арцаха, пережившего все это. Вследствие этого в карабахском диалекте многие слова военной сферы, переходя в разговорный пласт, употребляются в новых значениях, образуют фразеологизмы, устойчивые словосочетания, топонимы, прозвища и используются как средства стилизации речи.

Ключевые слова: военная сфера, лексический сдвиг, карабахский диалект, диалектная среда, военная и послевоенная действительность, семантический сдвиг слов, фразеологизм, устойчивые словосочетания, прозвище, топоним.

Мовсесян Рена**,** кандидат филологических наук, доцент, Институт языка им. Р. Ачаряна, научный сотрудник, доцент кафедры арменоведения государственного университета им. В. Брюсова.